

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 27/6

ք.Երևան

18 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը հայտնում է, որ 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ դիմումը գրել է հունվար ամսին և տեխնիկական խնդիրների պատճառով չի ուղարկվել: Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանն այդ մասին տեղեկացել է 18.04.2018թ., երբ ցանկանում էր ներկայացնել առաջին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկը, սակայն ծրագիրը թույլ չի տվել: Այդ պահին նա հասկացել է, որ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ դիմումը տեղ չի հասել:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը խնդրում է, որպիսի կրկին համարվի շրջանառության հարկ վճարող:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 07.05.2010թ.:

Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանին շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ ծանուցվել է 10.02.2015թ.:

Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը զբաղվում է ամսագրերի հրատարակչությամբ և 2017թ. ընթացքում իրացման շրջանառությունը կազմել է 3.407.560 դրամ:

Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը 14.01.2018թ. ստեղծել է 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, սակայն այն փաստացի ուղարկել իրեն չի հաջողվել:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպիսիները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով

սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը բավարարում է Օրենսգրքով նախատեսված բոլոր պահանջներին 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանը սահմանված ժամկետում փորձել է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարարությունը (նիստի ժամանակ ներկայացվեցին նշված փաստը հիմնավորող ապացույցներ), սակայն իրեն փաստացի չի հաջողվել էլեկտրոնային եղանակով այն ուղարկել, Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանի դիմում-բողոքը բավարարել:
2. Ա/Ձ Լիլիթ Համբարձումյանի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ. Մ. ԽՈՎՀԱՆՆԻՅԱՆ

